Practical guide to the Request for International Protection in Belgium

Բելգիա

fedasil
FEDERAL AGENCY FOR THE RECEPTION OF ASYLUM SEEKERS

cgvs ra
Office of the Commissioner General for Refugees and Stateless Persons

ibz
Federal Public Service Home Affairs

euaa
EUROPEAN UNION AGENCY FOR ASYLUM

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ, ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԴԻՄԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ARMENIAN
հայ

Juni 2026

Դուք այժմ գտնվում եք Բելգիայում, ԵՄ անդամ երկրում:
ԵՄ+ երկրներն են՝

Եվրոպական Միության (ԵՄ) 27 անդամ պետությունները՝ Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Դանիա, Գերմանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Խորվաթիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Ավստրիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Չեխիա և Շվեդիա, և

4 այլ երկրներ՝ Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա և Շվեյցարիա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է միջազգային պաշտպանությունը (ապաստանը)..... 3
Ի՞նչ է ապաստանի ընթացակարգը..... 4
Ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունենում ձեր դիմումի գրանցումը և ներկայացումը.....6
Ի՞նչ է տեղի ունենում ձեր դիմումի գրանցման և ներկայացման ընթացքում.....7
Ի՞նչ ընթացակարգ է կիրառվում, եթե դուք ժամանել եք երեխաների կամ կախյալ չափահասի հետ.....10
Ո՞ր երկիրն է ուսումնասիրում ձեր դիմումը.....11
Ինչպե՞ս է գնահատվում ձեր դիմումը.....12
Ինչպե՞ս եք ստանում ձեր միջազգային պաշտպանության դիմումի վերաբերյալ որոշումը.....17
Բողոքարկման հնարավորություն.....20
Որո՞նք են ձեր իրավունքները..... 21
Որո՞նք են ձեր պարտավորությունները.....25
Ի՞նչ է պատահում, եթե դուք չեք կատարում ձեր պարտավորությունները..... 29
Ինչպե՞ս են իշխանությունները վարվում որևէ հատուկ կարիքի հետ 31
Բժշկական զննում: 31
Ի՞նչ անել, եթե դուք ցանկանում եք վերադառնալ ձեր երկիր.....32

Ի՞ՆՉ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դուք կարող եք միջազգային պաշտպանության կարիք ունենալ, եթե չեք կարող վերադառնալ Ձեր երկիրը, քանի որ վախենում եք հետապնդումից կամ բախվում եք լուրջ վնաս կրելու իրական վտանգի: Սա, օրինակ, նշանակում է, որ Ձեր կյանքը կամ ազատությունը կարող է վտանգված լինել, և Ձեր երկրի իշխանությունները չեն կարող կամ չեն ցանկանում պաշտպանել Ձեզ այն վտանգից, որին Դուք ենթարկվում եք:

Միջազգային պաշտպանության համար դիմելը Ձեր իրավունքն է:

Եվրոպայում միջազգային պաշտպանությունը կարող է ունենալ տարբեր ձևեր՝ **փախստականի կարգավիճակ** կամ **լրացուցիչ պաշտպանության կարգավիճակ**:

Միջազգային պաշտպանությունը նաև կոչվում է **ապաստան**:

Ի՞ՆՉ Է ԱՊԱՍՏԱՆԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ապաստանի տրամադրման ընթացակարգի ընթացքում իշխանությունները կգնահատեն, թե արդյոք Դուք միջազգային պաշտպանության կարիք ունեք և, եթե այո, ապա պաշտպանության որ տեսակն է կիրառելի Ձեր դեպքում: Ընթացակարգի շրջանակում Դուք հնարավորություն կունենաք ներկայացնելու բոլոր այն պատճառները, որոնց պատճառով լքել եք Ձեր տունը և ծագման երկիրը:

Ճշմարտացիորեն ներկայացրեք պաշտոնատար անձանց Ձեր երկիրը լքելու բոլոր պատճառները:

Միջազգային պաշտպանության համար դիմում ներկայացնելուց հետո Դուք համարվում եք միջազգային պաշտպանության դիմող:

Իշխանություններին ձեր կողմից տրամադրված ողջ տեղեկատվությունը մնում է գաղտնի: Այս տեղեկատվությունը երբեք չի փոխանցվում այն անձանց, որոնցից դուք պաշտպանություն եք փնտրում.

Ապաստանի ընթացակարգը ներառում է հետևյալ քայլերը

Ժամանում Եվրոպա

1 Դիմում ներկայացնել

2 Դիմումի գրանցում

3 Դիմումի ներկայացում

4 Անձնական հարցազրույց

5 Որոշման մասին ծանուցում

Հարցման քննության համար պատասխանատու ԵՄ+ երկրի որոշում

Հնարավոր է տեղափոխում ԵՄ մեկ այլ երկիր

Դրական որոշում

Պաշտպանություն

Բողոքարկման հնարավորություն

Մերժում

Բացասական որոշում

Ե՞ՐԲ և ՈՐՏԵ՞Ղ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ և ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ:

Միջազգային պաշտպանության դիմելուց հետո ձեր դիմումը սկզբունքորեն կգրանցվի և կներկայացվի նույն օրը և նույն վայրում: Այն գրանցվում է օտարյերկրացիների հարցերով ծառայությունում (DVZ):

DVZ-ն, որքանով հնարավոր է, կփորձի գրանցել ձեր դիմումը նույն օրը:

Ձեր դիմումը գրանցելուց հետո ձեզ կտեղեկացվի, թե ինչպես ներկայացնել ձեր դիմումը:

Եթե դիմումը չի կարող ներկայացվել նույն օրը, դուք կստանաք փաստաթուղթ: Այս փաստաթղթով դուք կարող եք ապացուցել, որ ներկայացրել եք միջազգային պաշտպանության դիմում, և որ այդ դիմումը գրանցվել է:

Եթե դուք ձեր դիմումը ներկայացնում եք մեկ այլ մարմնի, որը իրավասու չէ գրանցել ձեր դիմումը, այդ մարմինը ձեզ կուղարկի օտարյերկրացիների հարցերով ծառայություն:

Շատ կարևոր է, որ դուք ամբողջությամբ լրացնեք ձեր դիմումի ներկայացումը: Եթե դուք չլրացնեք ներկայացումը, ձեր դիմումը կհամարվի հետ վերցված, եթե չներկայացնելու պատճառը ձեր վերահսկողությունից դուրս չէ: Սա նշանակում է, որ դուք կկորցնեք ձեր՝ որպես դիմորդի կարգավիճակը, աջակցություն և ծառայություններ ստանալու իրավունքը, ինչպես նաև այս երկրում մնալու իրավունքը:

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Գրանցումը և ներկայացումը ներառում են հետևյալ ասպեկտները

Ձեզանից մատնահետքեր կվերցվեն

Ձեզ կլուսանկարեն

Ձեզանից խնդրվում է ներկայացնել ձեր անձը հաստատող փաստաթղթերը, ճանապարհորդական ության փաստաթղթերը և այլ համապատասխան փաստաթղթեր:

Պարտադիր է DVZ-ին ներկայացնել անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց պատճենները, եթե դրանք առկա են

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (ՄԱՍ 2-Ը 3-ԻՑ)

Ձեզ խնդրվում է տրամադրել Ձեր անձնական տվյալները: Ձեզ նաև հարցնում են այս երկրում կամ ԵՄ+ մեկ այլ երկրում բնակվող ընտանիքի անդամների մասին:

Բելգիայում գտնվելուց ի վեր DVZ-ն կստուգի, թե արդյոք արդեն իսկ ունեք բնակության հասցե Բելգիայում, և արդյոք Ձեզ անհրաժեշտ է կացարան:

Բացի այդ, Դուք պետք է ընտրեք բնակության վայր Բելգիայում:

Ձեզ նաև կհարցնեն, թե արդյոք ցանկանում եք թարգմանչի օգնություն ստանալ ընթացակարգի մնացած մասի ընթացքում:

Ձեզ խնդրվում է տրամադրել ձեր կոնտակտային տվյալները (հասցե, հեռախոսահամար և էլեկտրոնային փոստի հասցե):

Մուտքի ժամանակ կանցկացվի անվտանգության ստուգում: Եթե դուք ունեք վտանգավոր համարվող իրեր, դրանք կբռնագրավվեն

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ և ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (ՄԱՍ 3-Ը 3-ԻՑ)

Ձեզանից խնդրվում է ներկայացնել ձեր հարցումը հիմնավորող բոլոր առկա տեղեկություններն ու փաստաթղթերը: Սա ներառում է տեղեկություններ և փաստաթղթեր՝ հետևյալի մասին՝

- ձեր ծագման երկիրը և այն բոլոր երկերները, որտեղ դուք ապրել եք
-ձեր երկիրը լքելու և վերադառնալ չցանկանալու պատճառները
-ձեր և ձեր ընտանիքի ծագումը
-Եվրոպա և Եվրոպայով ձեր ճանապարհորդության մանրամասները
-միջազգային պաշտպանության նախկին բոլոր հարցումները

Այս քայլերի հերթականությունը կարող է տարբեր լինել, բայց բոլոր դիմորդներին վերաբերվում են նույն կերպ: Բելգիայում, դիմումը ներկայացնելուց հետո, ձեզ կլսի DVZ-ն՝ անհրաժեշտ տվյալներն ու տեղեկատվությունը հավաքելու համար: Հավաքված տվյալները անվտանգ կերպով պահվում են ազգային և եվրոպական տվյալների բազաներում:

Ձեր պարտականությունն է և ձեր սեփական շահերից է բխում ճշմարտությունը ասելը և իշխանությունների հետ համագործակցելը:

Դիմումը ներկայացնելուց հետո դուք կստանաք պաշտոնական փաստաթուղթ, որը հաստատում է, որ դուք միջազգային պաշտպանության համար դիմած անձ եք:

Դուք պետք է միշտ ձեզ հետ պահեք այս փաստաթուղթը:

Եթե դիմումը չի կարող ներկայացվել նույն օրը, գրանցումից հետո դուք կստանաք փաստաթուղթ, որը թույլ կտա ձեզ ապացուցել, որ դուք ներկայացրել եք դիմում, և որ այս դիմումը գրանցվել է:

Ի՞ՆՉ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԵԼ ԵՔ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՄ ԿԱԽՅԱԼ ՄԵԾԱՀԱՍԱԿԻ ՀԵՏ

Եթե Դուք եկել եք

- `Ձեր մինչև 18 տարեկան երեխաների հետ,
- կամմինչև 18 տարեկան այն երեխաների հետ, որոնց համար Դուք իրավաբանորեն պատասխանատու եք,

ապա նրանք նույնպես պետք է դիմեն միջազգային պաշտպանության համար:

Եթե Ձեր երեխաները 18 տարեկան կամ ավելի մեծ են, նրանք պետք է ներկայացնեն իրենց սեփական դիմումը:

Եթե դուք պատասխանատու եք 18 տարեկան կամ ավելի մեծ անձի համար, ով հաշմանդամության պատճառով անկարող է ինքնուրույն որոշումներ կայացնել, կարող եք դիմել միջազգային պաշտպանության համար և դիմում ներկայացնել նրա անունից:

Այդ անձը պետք է ձեզ հետ լինի գրանցման և իր դիմումի ներկայացման ժամանակ:

Ո՞Ր ԵՐԿԻՐՆ Է ՔՆՆՈՒՄ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻԸ



Սահմանված է, որ ԵՄ+ երկիրը կքննի ձեր միջազգային պաշտպանության դիմումը: Դուք չեք կարող ինքներդ ընտրել այդ երկիրը:

Իշխանությունները հետևում են ընթացակարգին՝ որոշելու համար, թե որ ԵՄ+ երկիրն է պատասխանատու ձեր միջազգային պաշտպանության դիմումի համար: Սա կոչվում է պատասխանատու երկիր նշանակելու ընթացակարգ:

Այս պատճառով դուք պետք է իշխանություններին տեղեկացնեք հետևյալի մասին՝
-արդյոք ունեք ընտանիքի անդամ մեկ այլ ԵՄ+ երկրում.
-արդյոք անցյալում մեկ այլ ԵՄ+ երկիր ձեզ տրամադրել է վիզա կամ բնակության փաստաթուղթ (վիզան ձեզ թույլտվություն է տալիս այցելել որևէ երկիր, օրինակ՝ անձնագրում կնիքով. բնակության փաստաթուղթը փաստաթուղթ է, որը թույլ է տալիս ձեզ մնալ երկրում).
-արդյոք նախկինում մուտք եք գործել մեկ այլ ԵՄ+ երկիր.
-արդյոք արդեն դիմել եք միջազգային պաշտպանության համար մեկ այլ ԵՄ+ երկրում.
-արդյոք մեկ այլ ԵՄ+ երկիր ձեզ տրամադրել է կրթական դիպլոմ կամ որակավորում:

Եթե իշխանությունները կարծում են, որ ձեր հարցումը քննելու համար պատասխանատու կարող է լինել մեկ այլ ԵՄ+ երկիր, դուք կստանաք ավելի մանրամասն տեղեկատվություն այս ընթացակարգի և ձեր իրավունքների ու պարտականությունների մասին:

Այս մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել առանձին գրքույկում:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ

ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե Բելգիան համարվի պատասխանատու ձեր միջազգային պաշտպանության դիմումի ուսումնասիրման համար, ձեր գործը կփոխանցվի Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատին (CGVS): CGVS-ը կարող է ձեզ հրավիրել անձնական հարցազրույցի:

Եթե այս հրավերը ստանաք դիմումի նամակի միջոցով, պետք է սպասեք երեք շաբաթ մինչև անձնական հարցազրույցի օրը: Եթե դուք մնում եք ընդունման կենտրոնում, CGVS-ը հրավերը կուղարկի կենտրոնի տնօրենին փոստով: Նա կհասցնի հրավերը ձեզ: Եթե դուք մնում եք մասնավոր հասցեում, հրավերը կստանաք գրավոր նամակով: Այն կուղարկվի ձեր տրամադրած հասցեին:

Անձնական հարցազրույցին պետք է դիմումի նամակը ձեզ հետ բերեք: Այս հարցազրույցը տեղի է ունենում CGVS Բրյուսելում: Եթե դուք գտնվում եք փակ կենտրոնում կամ բանտում, CGVS-ի աշխատակիցը հարցազրույց կանցկացնի ձեզ հետ այնտեղ: Անձնական հարցազրույցը կարող է տեղի ունենալ նաև տեսակոնֆերանսի միջոցով:

Եթե դուք ունեք փաստաբան, նա պետք է տեղեկացնի CGVS-ին, որ ինքը գործում է ձեր ապաստանի գործընթացում: Այնուհետև նա կստանա CGVS-ի կողմից ձեզ ուղարկված բոլոր նամակագրությունների պատճենները, օրինակ՝ անձնական հարցազրույցի կանչը:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ

ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե դուք չեք կարող անձամբ մասնակցել անձնական հարցազրույցին, պետք է տեղեկացնեք CGVS-ին: Կարող է պատահել, որ դուք չկարողանաք ներկայանալ CGVS անձնական հարցազրույցի օրը, օրինակ՝ հիվանդանոցում գտնվելու պատճառով: **Դուք պետք է CGVS-ին ներկայացնեք այն փաստաթուղթը, որը հաստատում է, որ դուք չեք կարող մասնակցել, օրինակ՝ բժշկական տեղեկանք:**

Հնարավորության դեպքում, խնդրում ենք այս փաստաթուղթը ուղարկել CGVS-ին անձնական հարցազրույցի օրվանից առաջ: Այս դեպքում CGVS-ն հարցազրույցի բոլոր գործնական կազմակերպչական աշխատանքները (թարգմանիչ կանչել և այլն), չի կատարի քանի դուք դեռ չեք կարող մասնակցել:

Եթե դուք չպատասխանեք անձնական հարցազրույցի կանչին և չտեղեկացնեք CGVS-ին, ձեր միջազգային պաշտպանության դիմումը կարող է մերժվել: Եթե դուք չեք տեղեկացրել CGVS-ին ձեր բացակայության հիմնավոր պատճառի մասին անձնական հարցազրույցի նշանակված օրվանից հետո 8 օրվա ընթացքում (արագացված ընթացակարգի դեպքում՝ 2 օր), կամ եթե դուք չեք արձագանքել տեղեկատվության հարցմանը հարցազրույցի նշանակված օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում, դա կարող է հանգեցնել մերժման որոշման:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ

ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Որպես չափահաս, դուք կհարցաքննվեք առանձին CGVS-ում: Ձեր ընտանիքի անդամներից ոչ մեկը ներկա չի լինի ձեր անձնական հարցազրույցի ժամանակ: Այս հարցազրույցի ընթացքում դուք կարող եք նշել բոլոր պատճառները, թե ինչու եք վախենում վերադառնալ ձեր ծագման երկիր:

Թարգմանիչը թարգմանում է պաշտպանության ծառայողի (հարցազրույցն անցկացնող CGVS աշխատակցի) հարցերը, ինչպես նաև ձեր հայտարարությունները: Հարցազրույցին կարող են ներկա լինել ձեր փաստաբանը կամ վստահելի անձը:

Պաշտպանության ծառայողը ապահովում է վստահության մթնոլորտ, որպեսզի դուք կարողանաք ազատորեն խոսել ձեզ հետ կատարվածի կամ ձեր վախի մասին: Թարգմանիչը անկախ է և կապված չէ CGVS-ի հետ: Սա նշանակում է, որ նա չեզոք է և որևէ ազդեցություն չունի որոշման վրա:

Ինքնաբուխ պատմեք, թե ինչ է պատահել ձեզ հետ կամ ինչից եք վախենում, բայց մի՛ անգիր սովորեք պատմություն: Մի՛ լսեք ձեր շրջապատի մարդկանց խորհուրդները, ովքեր հորդորում են ձեզ պատմել այն, ինչ դուք չեք զգացել: Եթե հարցազրույցի ընթացքում վստահ չեք, թե արդյոք ճիշտ եք հասկացել հարցը, անմիջապես ասեք դա: Պաշտպանության աշխատակիցը կվերաձևակերպի հարցը: Նույնիսկ եթե չգիտեք հարցի պատասխանը, ավելի լավ է ասել, որ չգիտեք, քան ստել կամ ինչ-որ բան հորինել:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ

ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ ԱՌԱՋ

Նաև ներկայացրեք բոլոր փաստաթղթերը (ձեր ինքնության, ծագման, ճանապարհորդության երթուղու և ապաստանի հիմքերի վերաբերյալ), որոնք հիմնավորում են ձեր պնդումները: Հնարավորության դեպքում տրամադրեք բնօրինակ փաստաթղթեր: Փաստաթղթերի և/կամ կարևոր տեղեկատվության չտրամադրումը կարող է բացասաբար անդրադառնալ ձեր միջազգային պաշտպանության դիմումի գնահատման վրա: Ցանկալի է փաստաթղթերը ներկայացնել CGVS-ին ձեր անձնական հարցազրույցից առաջ, եթե դուք դրանք դեռ չեք ներկայացրել DVZ-ում ձեր հարցազրույցի ժամանակ:

Հարցազրույցը կարող է տևել մինչև չորս ժամ, և անհրաժեշտության դեպքում կհաջորդի լրացուցիչ հարցազրույց: Հարցազրույցի ընթացքում նախատեսված են մեկ կամ մի քանի ընդմիջումներ: Անհրաժեշտության դեպքում ձեզ հետ բերում եք սնունդ և խմիչք, և դեղորայք, եթե անհրաժեշտ է դրանք ընդունել որոշակի ժամերին:

Որպեսզի հարցազրույցը սահուն անցնի, ավելի լավ է, որ փոքր երեխաները ներկա չլինեն: **Եթե դուք ունեք փոքր երեխաներ, խորհուրդ ենք տալիս նրանց չբերել CGVS հարցազրույցի օրը**: Եթե հարցազրույցի օրը չեք կարողանում գտնել ձեր երեխաների համար խնամքի վայր, կարող եք նրանց բերել CGVS: Դուք և ձեր զուգընկերը կարող եք հերթով հոգ տանել ձեր երեխայի/երեխաների մասին, մինչ ձեզանից մեկի հետ անձնական հարցազրույցը տեղի է ունենում: CGVS-ն ունի սպասասրահ երեխաներ ունեցող ընտանիքների համար:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՆԱՀԱՏՎՈՒՄ ՁԵՐ ԴԻՄՈՒՄԸ

ՁԵՐ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանության աշխատակիցը անձնական հարցազրույցի ընթացքում ասված ամեն ինչ գրավոր արձանագրում է: Անձնական հարցազրույցի ընթացքում նա արձանագրում է իր բոլոր հարցերը և ձեր հայտարարությունները: Ձեր հայտարարությունների այս գրավոր արձանագրությունը մենք անվանում ենք անձնական հարցազրույցի նշումներ:

Հարցազրույցի ամբողջ ընթացքը ձայնագրվում է աուդիոձայնագրությամբ (առանց տեսագրության): Դուք կարող եք մուտք ստանալ այս աուդիոձայնագրությանը, եթե բողոքարկեք բացասական որոշումը: Դա հնարավոր է CGVS-ում բողոքարկումը ներկայացնելուց առաջկամ հետո, ինչպես նաև Օտարերկրացիների դատավարության խորհրդում (RvV) բողոքարկումը ներկայացնելուց հետո: Ձայնագրությունը կարող է նաև ներկայացվել որպես ապացույց RvV-ում բողոքարկման ընթացակարգում:

Անձնական հարցազրույցից հետո պաշտպանության պատասխանատու աշխատակիցը լիովին անաչառ կերպով կգնահատի միջազգային պաշտպանության համար Ձեր դիմումը: Նա կուսումնասիրի Ձեր հայտարարությունների արժանահավատությունը և կստուգի, թե արդյոք Դուք համապատասխանում եք Փախստականների մասին կոնվենցիայի պահանջներին կամ իրավունք ունեք ստանալու լրացուցիչ պաշտպանության կարգավիճակ:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՔ ՍՏԱՆՈՒՄ ՁԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ

CGVS-ը ձեզ կտեղեկացնի ձեր միջազգային պաշտպանության դիմումի վերաբերյալ որոշման մասին պատվիրված նամակով: CGVS-ը որոշումը կուղարկի ձեր կողմից որպես բնակության վայր նշված հասցեին:

Եթե դուք մնում եք ընդունման կենտրոնում, որոշումը կուղարկվի ընդունման կենտրոնի հասցեին: Կախված ձեր գտնվելու կենտրոնի ընթացակարգերից, դուք կամ կստանաք որոշումը կենտրոնի աշխատակցից, կամ պետք է անձամբ գնաք փոստ՝ որոշման մասին ձեզ տեղեկացնող նամակը վերցնելու համար:

Եթե դուք բնակվում եք մասնավոր բնակարանում, փոստատարը կզանգահարի ձեր դռան զանգը և կհանձնի ձեզ պատվիրված նամակը: Եթե այդ ժամին տանը չեք, փոստատարը ձեր փոստարկղում նամակ կթողնի՝ նշելով, որ դուք պետք է անձամբ ստանաք պատվիրված նամակը փոստային բաժանմունքից: Եթե դուք ժամանակին չստանաք պատվիրված նամակը, փոստային ծառայությունը այն կվերադարձնի CGVS:

ԵԹԵ ՁԵՐ ՈՐՈՇՈՒՄԸ ԴՐԱԿԱՆ Է

Դրական որոշումը նշանակում է, որ ձեզ շնորհվել է փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանության կարգավիճակ: Դրական որոշումը ազդում է ձեր աշխատելու, ընտանիքի վերամիավորման դիմելու, նյութական աջակցություն ստանալու և Բելգիայում ձեր մնալը կազմակերպելու կարողության վրա:

ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Դուք ստացել եք CGVS-ի որոշումը, որով ձեզ փախստականի կարգավիճակ է շնորհվում: Մոտ մեկ ամիս անց դուք կստանաք փախստականի վկայական: Այս փախստականի վկայականով դուք գնում եք ձեր բնակության վայրի մունիցիպալիտետ և գրանցվում օտարերկրյա քաղաքացիների գրանցամատյանում:

Եթե ձեր մերձավոր ազգականներից ոմանք ցանկանում են միանալ ձեզ, նրանք կարող են դիմել ընտանիքի վերամիավորման համար: DVZ-ն քննում է ընտանիքի վերամիավորման դիմումը: Լավագույնն է այս դիմումը սկսել փախստականի կարգավիճակի շնորհումից հետո վեց ամսվա ընթացքում:

Փախստականի կարգավիճակ ստանալուց հետո դուք այլևս չեք կարող ձեր դեսպանատան միջոցով պահանջել քաղաքացիական գրանցամատյանի որոշակի փաստաթղթեր, ինչպիսիք են ծննդյան վկայականը: Դրա համար կարող եք կապվել CGVS-ի ճանաչված փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց օգնության ծառայության հետ:

Դուք կարող եք ավելի շատ տեղեկություններ գտնել Բելգիայի մասին «Դուք ճանաչվում եք որպես փախստական» գրքույկում՝ հետևյալ հասցեով՝ **www.cgrs.be/en/publications**:

ԵԹԵ ՁԵՐ ՈՐՈՇՈՒՄԸ ԴՐԱԿԱՆ Է

ՕԺԱՆԴԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Եթե դուք չեք համապատասխանում փախստականի կարգավիճակ ստանալու պայմաններին, CGVS-ը կարող է ձեզ տրամադրել օժանդակ պաշտպանության կարգավիճակ: Այնուհետև դուք կստանաք որոշում, որում նախ բացատրվում են փախստականի կարգավիճակի մերժման պատճառները: Ավելին, որոշման մեջ նշվում է, որ ձեզ տրամադրվում է օժանդակ պաշտպանության կարգավիճակ:

Եթե ձեր մերձավոր ազգականներից ոմանք ցանկանում են միանալ ձեզ, նրանք կարող են դիմել ընտանիքի վերամիավորման համար: DVZ-ն քննում է ընտանիքի վերամիավորման դիմումը: Լավագույնն է այս դիմումը սկսել փախստականի կարգավիճակի տրամադրումից հետո վեց ամսվա ընթացքում:

Դուք կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել ձեր՝ որպես օժանդակ պաշտպանության ենթարկված անձի կարգավիճակի մասին «Դուք օգտվում եք օժանդակ պաշտպանությունից Բելգիայում» հրապարակման մեջ՝ **www.cgrs.be/en/publications** հասցեով:

Դուք կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել բնակության փաստաթղթերի, բնակության իրավունքների, ճանապարհորդության և աշխատանքի մասին Ինտեգրացիայի և քաղաքացիական կրթության գործակալության կայքում (www.agii.be):

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Երբ դուք ստանում եք բացասական որոշում, դա նշանակում է, որ CGVS-ը, մանրակրկիտ հետաքննության հիման վրա, եզրակացնում է, որ ձեզ միջազգային պաշտպանություն պետք չէ: Եթե դուք համաձայն չեք այս բացասական որոշման հետ, սովորաբար ունեք 30 կամ 10 օր, կախված ընթացակարգից, այն դատարան՝ Օտարերկրացիների վերաբերյալ դատական վեճերի խորհուրդ (RvV) բողոքարկելու համար:

Օտարերկրացիների վերաբերյալ դատական վեճերի խորհուրդ (RvV) բողոքարկելու համար դուք պետք է ներկայացնեք միջնորդություն, որում կբացատրեք, թե ինչու համաձայն չեք Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի (CGVS) որոշման հետ: Այս գործընթացում կիրառվում են որոշակի ժամկետներ և հատուկ ձևական պահանջներ: Հետևաբար, կարևոր է, որ միջնորդությունը պատշաճ կերպով կազմվի: Հետևաբար, խորհուրդ է տրվում այս նպատակով ներգրավել փաստաբան: Հետագայում դուք և ձեր փաստաբանը կհրավիրվեք RvV-ի առջև կայանալիք լսմանը: Այս լսմանը մասնակցելը պարտադիր է ձեր, կամ ձեր փաստաբանի ներկայությունը: Լսման ընթացքում դուք կամ ձեր փաստաբանը կարող եք բանավոր բացատրել ձեր փաստարկները:

Սովորական մերժման որոշման դեպքում կիրառվում է 30-օրյա բողոքարկման ժամկետ, սակայն այս բողոքարկման ժամկետը կրճատվում է որոշակի իրավիճակներում, ինչպիսիք են արագացված ընթացակարգը կամ սահմանին ընթացակարգը: Ավելին, որոշակի դեպքերում բողոքարկումը ավտոմատ կերպով չի ունենում կասեցնող ազդեցություն, ինչը նշանակում է, որ բողոքարկման ընթացքում ձեզ կարող են հետ վտարել կամ հեռացնել տարածքից: Այդ դեպքում դուք կարող եք խնդրել մնալու թույլտվություն: Այս տեղեկատվությունը կգտնեք ձեր որոշման մեջ: Հետևաբար, ուշադիր կարդացեք ձեր որոշումը ձեր սոցիալական աշխատողի և/կամ ձեր փաստաբանի օգնությամբ: Նրանց հետ որոշեք, թե որ բողոքարկման ժամկետն է կիրառելի ձեր դեպքում:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՄՆԱԼՈՒ ԵՎ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՊԱՍՏԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես միջազգային պաշտպանության դիմորդ, դուք սկզբունքորեն իրավունք ունեք մնալ ձեր դիմումի քննության համար պատասխանատու երկրում մինչև դրա քննության ավարտը:

Ընդունելության աջակցության և ձեր ստացած ծառայությունների մասին տեղեկատվությունը կարող եք գտնել առանձին գրքույկում:

ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Եթե դուք չեք խոսում նիդերլանդերեն կամ ֆրանսերեն, թարգմանիչը կօգնի ձեզ շփվել իշխանությունների հետ DVZ-ում լսումների և անձնական հարցազրույցի ժամանակ: Թարգմանչի ծառայություններն անվճար են:

Թարգմանիչը չեզոք է, ինչը նշանակում է, որ նա ոչ մեկին նախապատվություն չի տալիս: Թարգմանիչը տեղեկատվությունը մշակում է գաղտնիության պայմաններում և ձեր ասածը չի փոխանցում իրավասու մարմիններից դուրս որևէ մեկին:

Թարգմանիչը որևէ ազդեցություն չունի Ձեր հարցման որոշման վրա:

Անմիջապես տեղեկացրեք իշխանություններին, եթե չեք հասկանում թարգմանչին կամ կարծում եք, որ թարգմանիչը չեզոք չէ:

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԽՆԴՐԵԼ ՏՂԱՄԱՐԴ ԿԱՄ ԿԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵԹԵ ԴԱ ԿՕԳՆԻ ՁԵԶ ԱՋԱՏ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ:

Կախված ձեր նշած պատճառներից և հասանելիությունից, ձեր հայցը կբավարարվի:

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ (ՓԱՍՏԱԲԱՆԻ) ՀԵՏ

Իրավաբանական խորհրդատուն այն անձն է, ով ձեզ առաջարկում է անձնական իրավաբանական օգնություն կամ ներկայացնում է ձեզ իշխանությունների հետ շփման մեջ: Իրավաբանական խորհրդատուն անկախ է իշխանություններից և պաշտպանում է ձեր շահերը: Իրավաբանական խորհրդատուն կարող է օգնել ձեզ միջազգային պաշտպանության դիմումի, ապաստանի ընթացակարգի և պաշտոնական հաղորդակցության հարցում, ինչպես նաև կարող է օգնել ձեզ անձնական հարցազրույցի ժամանակ:

Դուք իրավունք ունեք խորհրդակցել իրավախորհրդատուի հետ ապաստանի գործընթացի ցանկացած փուլում:

Ձեր իրավախորհրդատուի տվյալները տրամադրեք ծառայություններին, որպեսզի նրանք կարողանան նրան տեղեկացված պահել ձեր հարցման մասին:

ՁԵՐ ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍԶԻ ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂԱՆԱՆ ՆՐԱՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՊԱՀԵԼ ՁԵՐ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ապաստանի ընթացակարգի ընթացքում դուք կարող եք դիմել անվճար իրավաբանական խորհրդատվության: Սա նաև ներառում է իրավաբանական խորհրդատվություն՝ ձեր դիմումը ներկայացնելու համար:

Իրավաբանական խորհրդատվությունը նշանակում է, որ դուք կարող եք ստանալ բացատրություններ հետևյալի վերաբերյալ՝

- ձեր իրավունքների և պարտականությունների
- տարբեր ընթացակարգերի
- իրավական հարցերի

Գրանցվելիս և դիմումը ներկայացնելիս կարող եք տեղեկատվություն և իրավաբանական խորհրդատվություն խնդրել Օտարերկրացիների հարցերով ծառայությունից:

Կարող եք նաև իրավաբանական խորհրդատվություն ստանալ Իրավաբանական օգնության բյուրոներից (BJB):

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՄԱԿ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԱԿ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿԻ) ԿԱՄ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ:

Դուք կարող եք կապ հաստատել և հաղորդակցվել ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կամ նրա գործընկեր կազմակերպությունների հետ ապաստանի գործընթացի ցանկացած փուլում:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը պաշտպանում է միջազգային պաշտպանության համար դիմորդների և փախստականների շահերն ու իրավունքները: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը և նրա գործընկեր կազմակերպությունները նաև տեղեկատվություն և օգնություն են տրամադրում դիմորդներին:.

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կոնտակտային տվյալները և ապաստանի ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք գտնել ՄԱԿ-ի

Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կայքում՝ **https://help.unhcr.org/**:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՁԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՀՊԱՆԵ՛Ք ԱՅՍ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ՄՆԱՑԵՔ ԱՅՆ ԵՐԿՐՈՒՄ, ՈՐՏԵՂ ԴՈՒՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՔ ՀԱՅՑԵԼ

Մի՛ փորձեք մեկնել ԵՄ+ մեկ այլ երկիր: Դուք կարող եք մեկնել ԵՄ+ մեկ այլ երկիր միայն այն դեպքում, եթե ստացել եք իշխանությունների թույլտվությունը:

Համոզվեք, որ իշխանություններն կարող են կապ հաստատել ձեզ հետ, և որ դուք ներկա կլինեք բոլոր հանդիպումներին

Դուք պետք է անձամբ ներկայանաք բոլոր հանդիպումներին, եթե իշխանությունները դա պահանջեն: Դուք պետք է ժամանակին լինեք: Եթե լուրջ պատճառով չեք կարողանում ներկայանալ հանդիպմանը, պետք է անմիջապես տեղեկացնեք իշխանություններին և բացատրեք պատճառը:

ԼԻՍՐԺԵՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Երբ դա պահանջվի, դուք պետք է անեք հետևյալը

- Տրամադրեք ձեր անձնական տվյալները

- Ներկայացրեք ձեր անձը հաստատող փաստաթղթերը: Եթե դրանք չունեք, բացատրեք պատճառը:

- Թույլ տվեք վերցնել ձեր մատնահետքերը և լուսանկարել ձեզ:

- Ներկայացրեք ձեր հարցումը նշանակված օրը և վայրում:
- Անպայման ներկայացեք DVZ-ում կայանալիք լսումներին և անձնական հարցազրույցին, և պատասխանեք հարցերին հարցազրույցի ընթացքում:

- Համագործակցեք, եթե պետական մարմինները ցանկանան խուզարկել ձեզ կամ ձեր իրերը: Սա կկատարվի միայն անհրաժեշտության դեպքում: Մարմինը կբացատրի խուզարկության ընթացքը և պատճառները: Խուզարկությունը կիրականացվի նույն սեռի անձի կողմից և կիրականացվի այնպես, որ չխախտեն ձեր արժանապատվությունը:

ՊԱՏՄԻ ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ձեր ասածը մեծ նշանակություն ունի ձեր հարցման հավաստիության համար: Հետևաբար, դուք պետք է ազնիվ լինեք և տրամադրեք ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն ձեր ինքնության, ընտանիքի, ծագման երկրի, ձեր երկիրը լքելու պատճառների և այնտեղ չվերադառնալու ձեր ցանկության մասին:

Դուք կարող է ամեն ինչ չհիշեք, ուստի չկարողանաք պատասխանել բոլոր հարցերին: Այս դեպքում մի հորինեք պատասխաններ, այլ բացատրեք, որ չեք հիշում:

ՏՐԱՄԱԴՐԵՔ ԾԻՇՏ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԵՂԵՔ ՀԱՍԱՆԵԼԻ

Իշխանությունները պետք է կարողանան կապվել ձեզ հետ՝ կապված ձեր միջազգային պաշտպանության դիմումի հետ:

Եթե ձեր հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն կամ հեռախոսահամարը փոխվում են, անմիջապես տեղեկացրեք իշխանություններին:.

Խնդրում ենք նկատի ունենալ, որ դուք չեք կարող լքել Բելգիան, քանի դեռ ձեր հարցումը ընթացքի մեջ է:

Եթե դուք տեղավորվում եք կենտրոնում, չեք կարող տեղափոխվել մեկ այլ վայր առանց իշխանությունների թույլտվության:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ՁԵՐ ՀԱՅՑԸ ՀԱՎԱՍԱՐՄԱԳՐՈՂ ԲՈԼՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

Եթե դուք ունեք անձը հաստատող փաստաթղթեր, պետք է դրանք ներկայացնեք հնարավորինս շուտ:

Դուք պետք է ներկայացնեք բոլոր մյուս տեղեկություններն ու փաստաթղթերը, որոնք կարող են օգնել իշխանություններին ձեր դիմումը ուսումնասիրելու կամ որոշելու, թե որ երկիրն է պատասխանատու ձեր դիմումը ուսումնասիրելու համար: Սա կարող է ներառել, ի թիվս այլ բաների, անձնագիր, ամուսնության վկայական, ամուսնության գրքույկ, զինվորական ինքնության քարտ, ծառայության վկայական, քաղաքական կուսակցության անդամակցության քարտ, վկայականներ, դատարանի և ոստիկանության զեկույցներ, լուսանկարներ և բժշկական կամ հոգեբանական փաստաթղթեր:

Հարկավոր չէ ներկայացնել փաստաթղթեր, որոնք պարունակում են միայն ձեր երկրի մասին ընդհանուր տեղեկություններ: Ապաստան տրամադրող մարմինները տեղյակ են ձեր երկրում տիրող իրավիճակին:

Դիմումը ներկայացնելիս դուք պետք է հնարավորինս շուտ տրամադրեք բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը: Եթե փաստաթղթերը անմիջապես ձեր տրամադրության տակ չեն, ապա դրանք պետք է ներկայացնեք CGVS-ին, հենց որ դրանք ունենաք, եթե Բելգիան պատասխանատու է ձեր միջազգային պաշտպանության դիմումի ուսումնասիրության համար:

Դուք պարտավոր եք հնարավորության դեպքում տրամադրել բնօրինակ փաստաթղթերը: Դուք չեք կարող ոչնչացնել կամ դեն նետել անձը հաստատող փաստաթղթերը: Դուք չեք կարող թաքցնել համապատասխան փաստաթղթերը: Եթե դուք ունեք կեղծ փաստաթղթեր, դուք պետք է նաև ներկայացնեք դրանք և հստակ նշեք, որ դրանք կեղծ փաստաթղթեր են:

Եթե հնարավոր է և ռիսկ չի ներկայացնում, խնդրեք ձեր ընկերներին կամ ընտանիքի անդամներին ուղարկել ձեր փաստաթղթերը ձեզ:

Ի՞ՆՉ ԿՊԱՏԱՀԻ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՁԵՐ ԱՊԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ Է

Ձեր դիմումը կհամարվի հետ վերցված կամ մերժված: Սա նշանակում է, որ դուք կարող եք կորցնել միջազգային պաշտպանության դիմորդի կարգավիճակը և դրան կից բոլոր իրավունքները:

Սա տեղի է ունենում, եթե դուք հրաժարվում եք.

- տրամադրել տեղեկատվություն, երբ դա պահանջվում է,
- ձեր մատնահետքերը վերցնել կամ լուսանկարվել,
- ձեր հասցեն տրամադրել,
- պատասխանել հարցերին անձնական հարցազրույցի ժամանակ:

Նույնը կպատահի նաև, եթե դուք

- չներկայացնեք ձեր հարցումը սահմանված ժամկետում առանց հարգելի պատճառի,
- չներկայանաք անձնական հարցազրույցին առանց հարգելի պատճառի,
- չներկայանաք իշխանություններին, երբ դա պահանջվի,
- չմնաք այն վայրում, որտեղ դուք պետք է մնաք,
- իշխանությունների համար հասանելի չեք,
- լքեք երկիրը:

Դուք կարող եք նաև որոշել հետ վերցնել ձեր հարցումը ապաստանի ընթացակարգի ցանկացած պահի, օրինակ՝ որովհետև որոշել եք վերադառնալ ձեր երկիր: Այդ դեպքում դուք կորցնում եք միջազգային պաշտպանության դիմորդի կարգավիճակը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ՁԵՎԵՐ ԵՎ ՈՐՈՇ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ:

Որոշ դեպքերում Fedasil-ը կարող է որոշել սահմանափակել կամ դադարեցնել ընդունման աջակցության որոշակի ձևեր կամ ընդունման որոշակի ծառայություններ:

Fedasil-ը գրավոր կտեղեկացնի ձեզ նման որոշման մասին՝ ձեր իրավիճակը գնահատելուց հետո:

ՁԵՐ ՀԱՐՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Եթե դուք տրամադրում եք մոլորեցնող կամ սխալ տեղեկություններ ձեր ինքնության կամ ձեր հարցման վերաբերյալ, կամ եթե ոչնչացնում կամ կեղծում եք փաստաթղթեր, դա կարող է բացասական հետևանքներ ունենալ ձեր հարցման համար, օրինակ՝

- Ձեր դիմումը կարող է մերժվել, և դուք կարող է չունենաք միջազգային պաշտպանության իրավունք:

- Ձեր հարցումը կարող է ուսումնասիրվել սահմանային ապաստանի ընթացակարգի շրջանակներում: (Այդ դեպքում դուք կստանաք լրացուցիչ տեղեկատվություն այդ ընթացակարգի մասին):
- Ձեր հարցումը կարող է ուսումնասիրվել արագացված կարգով: Այդ դեպքում ձեր հարցումը ուսումնասիրելու ժամկետը կկրճատվի մինչև երեք ամիս: Արագացված ընթացակարգը կարող է կիրառվել նաև այլ հատուկ պատճառներով: Իշխանությունները կտեղեկացնեն ձեզ և կտրամադրեն լրացուցիչ բացատրություն, եթե արագացված ընթացակարգը վերաբերում է ձեզ:
- Միջազգային պաշտպանությունը կարող է նաև չեղյալ հայտարարվել, եթե իշխանությունները հետագայում պարզեն, որ դուք ճշմարտությունը չեք ասել ապաստանի ընթացակարգի ընթացքում:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐԸ:

Եթե ձեզ անհրաժեշտ է հատուկ աջակցություն, պետք է հնարավորինս շուտ տեղեկացնեք իշխանություններին: Այս կարիքները կարող են առաջանալ տարբեր իրավիճակներից, ինչպիսիք են հղիությունը, հիվանդությունը կամ հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնության փորձը:

Իշխանությունները կգնահատեն ձեր իրավիճակը և կարող են լրացուցիչ աջակցություն տրամադրել՝ ապաստանի ընթացակարգին ձեր մասնակցությունը հեշտացնելու համար: Օրինակ, նրանք կարող են ձեր գործին նշանակել մասնագիտացված անձնակազմ կամ փոփոխել ապաստանի ընթացակարգի տևողությունը:

ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒՄ

Իշխանությունները կարող են խնդրել ձեզ անցնել բժշկական զննում՝ հետապնդման կամ լուրջ վնասի ցանկացած նշանի հայտնաբերման համար, որի զոհն եք եղել անցյալում: Զննումը անվճար է, և ձեզանից կպահանջվի տալ ձեր համաձայնությունը: Ձեզ կտեղեկացնեն զննման արդյունքների մասին, որոնք հաշվի կառնվեն ձեր հարցումը ուսումնասիրելիս: Եթե իշխանությունները չեն պահանջում զննում, դուք կարող եք ինքներդ դա խնդրել ձեր անձնական ծախսերով:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՁԵՐ ԵՐԿԻՐ

Դուք կարող եք ապաստանի գործընթացի ցանկացած պահի որոշել կամավոր վերադառնալ՝

- ձեր երկիր կամ
- տարանցիկ երկիր կամ այլ երրորդ երկիր, եթե ունեք դրա իրավունքը:

Եթե որոշեք կամավոր վերադառնալ, ապա ձեր ապաստանի գործընթացը կդադարեցվի, և դուք այլևս իրավունք չեք ունենա մնալ Բելգիայում: Եթե ցանկանում եք դադարեցնել միջազգային պաշտպանության ձեր դիմումը ընթացակարգի ավարտից առաջ, ապա պետք է լրացնեք դրա համար նախատեսված ձևաթուղթը, որը կարող եք գտնել CGVS կայքում:

www.cgrs.be/en/forms/declaration-renunciation-application-international-protection

Եթե ցանկանում եք կամավոր վերադառնալ, խնդրում ենք կապվել Fedasil-ի հետ՝ www.vrijwilligeterugkeer.be/en-gb հասցեով: Դուք կարող եք ստանալ խորհրդատվություն և օգնություն անվտանգ և օրինական վերադարձի համար:

Կամավոր վերադարձի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ նաև DVZ-ի ICAM աշխատակիցներից: https://dofi.ibz.be/en/ICAM

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Աշխատակիցը կխնդրի ձեզ հաստատել, որ դուք ստացել եք այս տեղեկատվությունը:

Եթե ինչ-որ բան չեք հասկանում կամ դեռ կասկածներ ունեք, միշտ կարող եք հարցեր տալ:

Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատ (CGVS)

Office of the Commissioner General for Refugees and Stateless Persons (CGRS)

Rue Ernest Blerot, 39

1070 BRUSSELS

T 02 205 51 11

Website: **www.cgrs.be/en/contact-info**

- *Միջազգային պաշտպանության դիմումների ուսումնասիրում*
- *Ճանաչված փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց վկայականների և քաղաքացիական կացության փաստաթղթերի տրամադրում:*

Օտարերկրացիների հարցերով ծառայություն (DVZ)

Immigration Office (DVZ/OE)

Boulevard Pacheco, 44

1000 BRUSSELS

T 02 488 80 00

E-mail: **infodesk@ibz.fgov.be**

Website: **https://dofi.ibz.be/en/contact**

- *Մուտքը Բելգիայի տարածք, կացությունը, մշտական բնակությունը և օտարերկրյա քաղաքացիների հեռացումը Բելգիայից:*
- *Միջազգային պաշտպանություն. դիմումի գրանցում և դիմումի քննության համար պատասխանատու անդամ պետության որոշում:*

Օտարերկրացիների վերաբերյալ դատական վեճերի խորհուրդ (RvV)

Council for Alien Law Litigation (CALL) (CCE/RvV)

Rue Gaucheret, 92-94

1030 BRUSSELS

T 02 791 60 00

F 02 791 62 26

E-mail: **info.rvv-cce@ibz.fgov.be**

Website: **www.rvv-cce.be**

- *Բողոքարկումներ Օտարերկրացիների հարցերով ծառայության և փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի որոշումների դեմ*

Fedasil

Rue des Chartreux, 21

1000 BRUSSELS

T 02 213 44 11

F 02 213 44 22

E-mail: **info@fedasil.be**

Website: **www.fedasil.be**

- *Միջազգային պաշտպանության դիմորդների ընդունում և աջակցություն*
- *Կամավոր վերադարձի կոորդինացիա և աջակցություն*

Fedasil-ի գրանցման կենտրոն, Ֆեդասիլի գրանցման կենտրոն

Fedasil Arrival Centre

Rue de Passchendaele 2

1000 BRUSSELS

T 02 793 82 40

Website: **www.fedasilinfo.be/en**

Այս գրքույկը տրամադրվում է բացառապես տեղեկատվական նպատակներով և չի ստեղծում որևէ իրավունք կամ պարտավորություն: Հիմնական տեքստը պատրաստվել է Եվրոպական Միության ապաստանի գործակալության (ԵՄԱԳ) կողմից, և ԵՄԱԳ-ն լիազորում է միայն ԵՄ անդամ պետություններին վերարտադրել և փոփոխել այս գրքույկը: ԵՄԱԳ-ն որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում այս գրքույկում ներառված տեղեկատվության ճշգրտության, բովանդակության, ամբողջականության, օրինականության կամ հուսալիության համար՝ ԵՄ անդամ պետությունների կամ այլ պատասխանատու երրորդ կողմերի կողմից: ԵՄԱԳ-ն կամ ԵՄԱԳ-ի անունից գործող անձինք պատասխանատվություն չեն կրում այս գրքույկում ներառված տեղեկատվության որևէ օգտագործման համար:

© was originally created by the European Union Agency for Asylum (EUAA), 2026.

ISBN 000-00-00-00000-0
doi: 00.0000/0000000
AA-00-00-000-NL-C